Հասցե՝ Արտաշիսյան 46/1, Երևան 0039

հեռ☒՝ 010303010

mc@astvatsamayr.am

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ»
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

"SOURB ASTVATSAMAYR" Medical Centre JSC

«ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄԱՅՐ» ԲԿ ՓԲԸ

№ 17/1

29 հունվար 2026թ.

ՀՐԱՄԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը՝ հրամայում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
1	2	3	4	5		7	8	9	10	11
ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/13	2,5	Պուլսօքսիմետր, Ինհալյատոր	1950000	ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏՍՊԸ	03584501	ՀՀ կոտայքի մարզ Ձորաղբյուր 2224 Ջրվեժ Այգետարածք 4/115	16.01.2026թ.	«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ	1-ին սյունակում նշված ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.15 կետ (հրավերով սահմանված ժամկետում չի շտկվել արձանագրված անհամապատասխանությունները)	*

«Սուրբ Աստվածամայր» ԲԿ ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՍԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/13» ծածկագրով Բժշկական գործիքների և սարքավորումների ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, այն է՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են եղել անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ. Մասնակցի կողմից կցված հավելված 1-ը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացակայում է հավելված 1☒3-ը, անհրաժեշտ է շտկել հավելված 1-ը /մասնավորապես 2-րդ և 5-րդ չափաբաժինների համար նշել մոդել, արտադրող ընկերության անվանում և շտկել տեխնիկական բնութագրերը/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 14.01.2026 թվականին ծանուցվել էր Մասնակցին հրավերով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չեն շտկվել:

Գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով Մասնակցի հայտը գնահատել է անբավարար և մերժել:

Գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի:

Ընթացակարգի չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 19.01.2026 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

ՏՆՕՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱԲՅԱՆ